ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/38

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 14.06.2019թ.)

քննելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 06.06.2019թ. ներկայացված և 07.06.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/38 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

08.05.2019թ. «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն մասնակցել է «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով պաշտպանիչ միջոցների գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ): «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել թիվ 1, 2, 5, 6, 10, 12, 13, 14, 15, 17 և 20 չափաբաժինների համար, որոնց արժեքը կազմել է 1-ին չափաբաժնի համար՝ 5040 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 31250 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 4100000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի համար՝ 90000ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի համար՝ 990000 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի համար՝ 625000 ՀՀ դրամ, 13-րդ չափաբաժնի համար՝ 1797000 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի համար՝ 71820 ՀՀ դրամ, 15-րդ չափաբաժնի համար՝ 2390000 ՀՀ դրամ, 17-րդ չափաբաժնի համար՝ 728910 ՀՀ դրամ, 18-րդ չափաբաժնի համար՝ 2990000 ՀՀ դրամ: Միաժամանակ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, մասնավորապես ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին:

21.05.2019թ. Պատվիրատուի կողմից Ընկերությունը ստացել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի N 2.1 արձանագրությունը, համաձայն որի «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն թիվ 6, 14 և 17 չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմանավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

23.05.2019թ. «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի համակարգողի էլ. հասցեին ուղարկվել են անհրաժեշտ փաստաթղթերը՝ հրավերով նախատեսված հավելված 6 և հավելված 6.1:

04.06.2019թ. «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն ստացել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N3 արձանագրությունը, համակարգողը տեղեկացրել է, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն ունի հարկային ժամկետանց պարտավորություն 12000 ՀՀ դրամի չափով, և «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է: 05.06.2019 «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով մրցույթի համակարգողի էլ. հասցեին է ուղարկվել ՀՀ ՊԵԿ-ի կողմից 15.05.2019թ. տրված N 1357 տեղեկանքը՝ «հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային մնացորդների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ»:

N 1357 տեղեկանքում նշված է, որ ժամկետանց գումարը վերաբերում է դրոշմանիշային վճարին և կազմում է 12000 ՀՀ դրամ և միասնական հաշվի առկա գումարը (գերավճարը) կազմում է 4 582 754 ՀՀ դրամ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /08.05.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ /12000 ՀՀ դրամ/ և մերժել է հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն 08.05.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 12000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ: Մինչդեռ, մինչև հայտ ներկայացնելը, «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն Taxservice.am-ի միջոցով դիտել և համոզվել է, որ առ 08.05.2019թ. միասնական հաշվին առկա է 4 582 754 ՀՀ դրամ և ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 0 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտնել է, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի մոտ 12000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով (համապատասխան ապացույցը կցվում է):

Ընկերությունը գտնում է, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարն ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից), պարզվել է, որ 2018թ. հուլիսին վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում կատարվել են փոփոխություններ, և որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն է դիտարկվել նաև դրոշմանիշների վճարը՝ առանձին տողի ձևով: Պետք է նշել, որ վկայակոչված հրամանը հասանելի չէ, այն հրապարակված չէ, և «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն չէր կարող տեղյակ լինել, որ «ՀՀ պաշտպանության

ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը այսուհետ դիտարկվել է որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն, և Ընկերությունը ընթացակարգի մասնակցության հայտի հայտնել է և հավաստել, որ բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նման պայմաններում, Ընկերության կարծիքով, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

Ընկերությունը հայտնել է, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի 08.05.2019թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները կազմում են 0 ՀՀ դրամ և դեռ ավելին՝ միասնական հաշվին առկա է 4 582 754 ՀՀ դրամ (տեղեկանքը կցվում է): Եվ պետք է նշել, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /08.05.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ընկերությունը նշել է նաև, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ին թյուրիմացության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները դիտարկվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին: Միևնույն ժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը անդրադառնալով հարկերի և տուրքերի

համակարգին, օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներում սպառիչ թվարկում է ՀՀ-ում կիրառվող վճարների բոլոր տեսակները այն է՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը.

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

2. Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

Վերը նշվածների շարքում բացակայում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը, և վերոհիշյալ տրամաբանությամբ, ըստ Ընկերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը չպետք է դիտարկվեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Բացի այդ, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը վճարվում է Հիմնադրամ, մինչդեռ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները պետք է վճարվեն ՀՀ պետական կամ համայնքների բյուջեներ:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթներում արդեն իսկ քննվել են դրոշմանիշային վճարների վերաբերյալ տասնյակ բողոքներ և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգեր, որոնց քննության ընթացքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք դրոշմանիշների վճարը, որպես ժամկետանց հարկային պարտավորություն չեն դիտարկել, քանի որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ և առկա է ընկերությունների կողմից իրազեկված չլինելու հանգամանքը:

Բացի այդ, «Լոռի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի 13.09.2018թ. ներկայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոքի քննության շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը 12.09.2018թ. ուղղված գրությամբ (մատնանշված է 01.10.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/83 որոշմամբ) հենց ՀՀ ՊԵԿ-ը հայտնել է հետևյալը. «Դրոշմանիշային վճարների գծով առկա պարտավորությունները անհրաժեշտ է չդիտարկել որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորություն»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը խնդրել է «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ին ճանաչել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով պաշտպանիչ միջոցների ձեռքբերման մրցույթում թիվ 6, 14 և 17 չափաբժիններով ընտրված մասնակից:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը ներկայացրել է գրություն, որով խնդրել է պարտավորեցնել դադարեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի N3 արձանագրությամբ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով կայացրած որոշումը:

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն էլեկտրոնային եղանակով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրել է բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն բողոքի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 08.05.2019թ. հայտ է ներկայացրել «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ, 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 12 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով դուրս գրված N 427 վճարման հանձնարարականի համաձայն՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 08.05.2019թ. «900005001186» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 12 000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճարի մասով վճարում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 06.06.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով **08.05.2019թ.** հայտ ներկայացրած «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ, 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով:

Ընկերության գնային առաջարկը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի համար կազմել է 90 000 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի համար՝ 71 820 ՀՀ դրամ և 17-րդ չափաբաժնի համար՝ 728 910 ՀՀ դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 12 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միևնույն ժամանակ Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով դուրս գրված N 427 վճարման հանձնարարականը, որի համաձայն՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 08.05.2019թ. (հայտը ներկայացնելու օր) «900005001186» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 12 000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճարի մասով վճարում:

Ընկերությունը ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2019թ. տրված թիվ 1357 տեղեկանքը առ այն, որ 08.05.2019թ. դրությամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 12 000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթի մասնակցության հայտը ներկայացնելու նույն օրը՝ 08.05.2019թ. Ընկերության կողմից կատարվել են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա համապատասխան պարտավորությունները, և պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվեհամարին վճարվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված պարտավորության չափով վճարում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 06.06.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-10/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**